

ՄՌԱՅԼ ԽՈՂԵՐ

Ծանօթ դէմքեր, բարեկամ, հիշ մը երէց, օտարեկից,
Սկսած են չուն իրենց դէպի արիւնքն անծանօթ.
Երազներս ալ կը չունեն, կ'աւելնան սուգն ու թախիծ,
Որ պիտի՝ աւիւնս քամեն՝ մինչեւ հասնիմ անոնց մօտ:

Ձեր մեկնումով երբ կեանքին կը նահանջեն համն ու գոյն,
Կ'արժէ՞ ապրիլ այսպէս լո՛ւռ, մեծ մոհազի մը հանգոյն.
Համբուս վրայ ուր լոյսերն ա՛լ կը շփոթեն մի առ մի,
Կ'արժէ՞ երազ սերմանել որ օր մը ետք թառամի ...:

Հեռու չէ օրը, գիտեմ, կեանքը դառնայ ուր անի՞
Ո՛վ բնկերներս իմ, կառչած անօր կայմին՝ անալի.
Անօթիին համար բայց թանկ է ապուրը անառ,
Ծառաւանիւծ օրերուն բաւ չէ՞ միթէ ջուրը պաղ:

Պիտի մերժէ՞ ծերուկն այն՝ ուսերուն բեռն անագին,
Կեանքին իրեն մասուցած քաղաքախառն գինին,
Ծերուկն, որուն քիմքերուն կը յամենայ դեռ լեղին,
Շրթներն որուն չհանչցան համը օտար խորհիկին:

1984

Գ. ՀԱՐՏԱՐ

